ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

10102340

0010, Երևան, Վ. Սարգսյան 3/8, հեռ. 594004
Էլ. փոստ info@moj.am

17. 11. 2016թ. N 01/14972-16

Ձեր N ____________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Ջավադյան**

Ի պատասխան Ձեր 2016 թվականի նոյեմբերի 11-ի 15.1-06/000836-16 գրության՝ կից ներկայացվում է ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրամշակված նախագծերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարող՝ Եվա Սաղոյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն Հեռ. (010) 59-41-30

Արդարադատության
Նախարարություն

# ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրամշակված նախագծերի վերաբերյալ**

««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրամշակված նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

Արդարադատության
Նախարարություն

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրամշակված նախագծերի վերաբերյալ**

««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագծի 16-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 126-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 1.2 կետով, համաձայն որի՝ Կենտրոնական բանկը կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերության ապահովագրական պորտֆելի փոխանցման դիմումը բավարարում կամ մերժում է հոդվածի 1.1 մասով սահմանված երկամսյա ժամկետի ավարտից հետո՝ երեսնօրյա ժամկետում: Սույն որոշմամբ Կենտրոնական բանկն **անդրադառնում է** նաև ապահովագրական պորտֆելի փոխանցման վերաբերյալ ապահովադիրներից ստացված առարկություններին:

Հարկ է նշել, որ նախագծի նախնական տարբերակում վերոնշյալ կարգավորման առնչությամբ նախատեսվում էր, որ Կենտրոնական բանկը **հաշվի է առնում** նաև ապահովագրական պորտֆելի փոխանցման վերաբերյալ ապահովադիրներից ստացված առարկությունները: Նշված ձևակերպման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունն իր դիրքորոշումն է ներկայացրել 2016 թվականի հոկտեմբերի 7-ի 01/12667-16 գրությամբ, որի հիման վրա Կենտրոնական

բանկը ներկայացրել է նոր խմբագրություն:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ նախագծի նախնական տարբերակում օգտագործվող «հաշվի է առնում» և լրամշակված տարբերակում օգտագործվող «անդրադառնում է» եզրույթների միջև բովանդակային առումով տարբերություն չկա: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ դեպքում ապահովադիրների՝ առարկություն ներկայացնելու իրավունքի իրացման իրավական հետևանքների տեսանկյունից առաջանում է անորոշություն, մասնավորապես, անհասկանալի է՝ արդյոք ապահովադրի կողմից ներկայացված առարկությունները ապահովագրական պորտֆելի փոխանցման դիմումը մերժելու հիմք են, թե՝ ոչ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավական որոշակիության սկզբունքից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է հստակեցնել ապահովադիրների կողմից առարկություններ ներկայացնելու իրավունքի իրացման իրավական հետևանքը, հակառակ պարագայում առարկություն ներկայացնելու իրավունքն ինքնին կդառնա առարկայազուրկ:

««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ Կենտրոնական բանկի 2016 թվականի նոյեմբերի 11-ի 15.1-06/000836-16 գրության համաձայն՝ հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման են ներկայացվում ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների,

ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների լրամշակված նախագծերը, մինչդեռ գրությանը կից ներկայացված նախագծերի փաթեթում բացակայում է ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի լրամշակված նախագիծը:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**